# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

<<05>> հոկտեմբերի 2015 թվականի N2124 ք.Գյումրի

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ 2016 ԹՎԱԿԱՆԸ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի <<Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց համար 2016 թվականը հավասար հնարավորությունների տարի հայտարարելու և հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների տարի հայտարարելու կապակցությամբ անցկացվող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին>> N 40-36 արձանագրային որոշման 4-րդ կետի դրույթով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում հաշմանդամություն ունեցող անձանց համար 2016 թվականը հավասար հնարավորությունների տարի հայտարարելու կապակցությամբ իրականացվելիք միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

Ֆ.ՑՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետի 2015 թվականի
հոկտեմբերի 05-ի N1228 որոշման

# ԾՐԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ 2016 ԹՎԱԿԱՆԸ ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| NN | Միջոցառման անվանումը | Միջոցառման նկարագիրը | Կատարողը | Համակատարողը | Կատարման ժամկետը | Ակնկալվող արդյունքը | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հաշմանդամ երեխաների և երիտասարդների համար մշակութային միջոցառումների կազմակերպում | Մրցույթներ, ստուգատեսներ, փառատոներ, ստեղծագործություններ ի ցուցահանդեսների կազմակերպում | Հասարակական բարեգործական կազմակերպություններ | ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | Տարվա ընթացքում | Հաշմանդամություն ունեցող երեխաների և երիտասարդների ներառումը հասարակություն | Դոնոր կազմակերպություն ներ |
| 2. | Հաշմանդամ երեխաների ամառային հանգստի կազմակերպում՝ իրենց համար հարմարեցված վայրերում | Հաշմանդամ երեխաների համար խաղերի, տիկնիկային ներկայացումների, ուսուցողական դասընթացների / առաջին բուժօգնություն և այլն/ կազմակերպում, սննդի տրամադրում | <<Փյունիկ>> հասարակական կազմակերպություն | Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողով | Հուլիս-օգոստոս ամիսներ | Երեխաների հանգստի ապահովում | Դոնորներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 3. | «jaws» համակարգչային դասընթացներ | Նախատեսված է համակարգչային դասընթացներ անցկացնել տեսողական խնդիր ունեցող հաշմանդամների համար | <<Հաշմանդամների Մարզամշակութային Կենտրոն>> հասարակական կազմակերպություն | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության զբաղվածության տարածքային կենտրոններ, գործատուներ | Տարվա ընթացքում | Տեսողական խնդիր ունեցող անձանց համակարգչից օգտվելու հնարավորություն և համակարգչային ծրագրերին տիրապետում | ՀՀ պետական բյուջե, օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ |
| 4. | Մարզական-առողջարարական միջոցառումների կազմակերպում հաշմանդամություն ունեցող անձանց համար | Հաշմանդամություն ունեցող երեխաներին ու երիտասարդներին հատուկ մասնագետների օգնությամբ լողալ սովորեցնել | <<Հաշմանդամների Մարզամշակութային Կենտրոն>> հասարակական կազմակերպություն | ՀՀ Շիրակի Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն | Հունիս – սեպտեմբեր ամիսներ | Հատուկ մասնագետների օգնությամբ հաշմանդամություն ունեցող անձանց ֆիզիկական պատրաստվածության բարձրացում, առողջության ամրապնդում | Դոնոր կազմակերպություն ներ |
| 5. | Աջակցություն միայն հաշմանդամություն ունեցող անձանցից բաղկացած ընտանիքներին | Կկազմակերպվեն բարեգործական ակցիաներ՝ սոցիալական, առողջապահական, իրավաբանական, հոգեբանական ծառայությունների տեսքով | ՀՀ Շիրակի Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն, հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողով | Բարեգործական հասարակական կազմակերպություններ | Տարվա ընթացքում | Հաշմանդամություն ունեցող անձանցից բաղկացած ընտանիքների սոցիալական խնդիրների լուծում | Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ, դոնոր կազմակերպություն ներ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 6. | Հաշմանդամների միջազգային օրվան նվիրված միջոցառումներ /դեկտեմբերի 3/ | Կկազմակերպվեն թատերական ներկայացումներ, երաժշտական ելույթներ ինչպես նաև ձեռքի աշխատանքների ցուցադրում /հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությամբ/ | Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններ | Տեղական ինքնակառավարման մարմիններ, բարեգործական հասարակական կազմակերպություններ /համաձայնությամբ/, զանգվածային լրատվամիջոցներ | դեկտեմբերի 3 | Հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը հասարակություն | Օրենքով չարգելված ֆինանսավորման աղբյուրներ |
| 7. | Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով | Մասնագիտական ուսուցողական ծրագրերով մասնագիտական ու կրթական աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան հմտություններ կտրամադրվեն հաշմանդամություն ունեցող անձանց | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության զբաղվածության տարածքային կենտրոններ, | Գործատուներ | Տարվա ընթացքում | Աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման գործընթացին | ՀՀ պետական բյուջե |
| 8 | Հաշմանդամություն ունեցող անձանց ինքնազբաղվածության խթանման նպատակով փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում | Տրամադրվում է խորհրդատվություն, որը ներառում է փոքր ձեռնարկատիրական գործունեության մեկնարկի և իրականացման համար անհրաժեշտ ուսուցում, գործարար ծրագրերի մշակում | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության զբաղվածության տարածքային կենտրոններ, | <<Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն>> հիմնադրամ | Տարվա ընթացքում | Աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց ինքնազբաղվածությանը | ՀՀ պետական բյուջե |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Խ. ՊՈՂՈՍՅԱՆ